9 սեպտեմբերի 1997 թվականի N 373
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ԳԱԶՊՐՈՄ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԻՏԵՐԱ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԻՄՆԱԴԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում բնական գազի օգտագործման ծավալներն ավելացնելու, գազատարների կառուցման և օգտագործման, Հայաստանի Հանրապետության տարածքով ռուսաստանյան բնական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրանց մատակարարման գործընթացն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հավանություն տալ Մոսկվա քաղաքում 1997 թվականի օգոստոսի 30-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության, Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության և «Իտերա» («ITERA» lnternational Energy, LLC») ընկերության միջև կնքված «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին հիմնադիր պայմանագրին: